



Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09⁰⁰-ից մինչև 18⁰⁰-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- 1) **ՀՀ փաստաբանական պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության մասին.**
- 2) **Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 3) **Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

- 1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը (ընտրությունը)** սկսվում է **2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09⁰⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18⁰⁰-ին:**
- 2. Կարգապահական հանձնաժողովի անդամների **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2022 թվականի նոյեմբերի 26-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին (ներառյալ):**
- 3. Կարգապահական հանձնաժողովի անդամների **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2022 թվականի դեկտեմբերի 2-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 18⁰⁰-ին:**
- 4. **2022 թվականի դեկտեմբերի 23-ը համարվում է լուռության օր:**
- 5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին և Փաստաբանի վարքագծի կանոնադրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելու է ընդհանուր ժողովի հրավիրված օրվանից ոչ ուշ քան առնվազն 14 օր առաջ:

Եթե կունենաք կանոնադրության մեջ կամ Փաստաբանի վարքագծի կանոնադրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկներ, ապա կարող եք սույն ծանուցումը հրապարակվելու օրվանից տասնօրյա ժամկետում գրավոր ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22 նոյեմբերի 2022թ. թիվ 19/4-Լ որոշումը